# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

« 27 » նոյեմբերի 2020 թվականի N: 363-Ա ք.Գյումրի

ԳԱՅԱՆԵ ԲԻՉԱԽՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Գայանե Բիչախչյանի 2020 թվականի նոյեմբերի 24-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Բիչախչյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 8-ը ներառյալ:
2. Գայանե Բիչախչյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 29 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության զինղեկ Հասմիկ Ջուլհակյանին:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է